ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (-374 11) 514 004, էլ. փոստ՝ mayor@yerevan.am

N 4855-Ա «01» դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի Հ.269-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 18-ի հ. Ն/68491-25 գրությունը.

1.Երևանի քաղաքապետի՝ 2025 թվականի հունվարի 30-ի «Երևանի ենթակայության մարզադպրոցների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.269-Ա որոշման N14 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի ու սույն որոշման հավելվածում նշված կազմակերպության տնօրենի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Երևանի քաղաքապետի
01.12.2025թ.
հ.4855-Ա որոշմամբ

«Հավելված 14
Հաստատված է
Երևանի քաղաքապետի
30.01.2025թ.
հ. 269-Ա որոշմամբ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱԲԿԻՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

դրամ

h/h	Հաստիքների անվանում	Հաստիքների քանակ	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափ	Ընդամենը ամսական աշխատավարձ
1	2	3	4	5
1	Տնօրեն	1.0	315,000	315,000
2	Փոխտնօրեն ուսումնական գծով	1.0	259,000	259,000
3	Փոխտնօրեն տնտեսական գծով	1.0	259,000	259,000
4	Գլխավոր հաշվապահ	1.0	191,000	191,000
5	Մարզիչ	22.0	191,000	4,202,000
6	Մեթոդիստ	1.0	191,000	191,000
7	Բժիշկ	1.0	191,000	191,000
8	Պարուսույց	2.0	191,000	382,000
9	Գործավար	1.0	142,000	142,000
10	Բանվոր	1.0	142,000	142,000
11	Հանդերձապահ	2.0	142,000	284,000
12	Հավաքարար	4.0	142,000	568,000
13	Էլեկտրիկ	1.0	142,000	142,000
14	Հնոցապան	1.0	142,000	142,000
15	Հնոցապան (սեզոնային)	3.0	142,000	426,000
14	Պահակ	3.0	142,000	426,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**46.0**		**8,262,000**

Ծանոթություն.
1) Լրավճարները նախատեսվում են ՀՀ կառավարության 16.07.2015թ. հ.798-Ն որոշման կարգի 13-րդ կետով նշված կոչումներն ունեցող անձանց համար՝ հաշվարկային հիմքի (1000 դրամ) և համապատասխան գործակցի արտադրյալի չափով:
2) Հաստիքացուցակում ներառված չեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հավելումները: »

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**